**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌԻ ՄԱՐԶ**
**ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 30
*28 փեփրվար 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ավագանու 2017 թվականի թիվ 05 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գուգարք համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ.Գուգարք, 5-24-76 gugarqgyux@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 05

ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 10-րդ բաժնի 74 կետը՝*

*ավագանին որոշում է.*

1. Թույլատրել Գուգարքի համայնքապետարանին համայնքապետարանի շենքի ջեռուցման կենտրոնացված համակարգի ներդրման աշխատանքների ձեռքբերման գործընթացը կազմակերպել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնման ձևով << Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիմքով՝այն է՝ ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, քանի որ գնման պարզեցված ընթացակարգի կիրառման արդյունքում պայմանագիր կարող է կնքվել առնվազ 15 օրացույցային օր հետո, մինչդեռ խիստ ձմեռվա պայմաններում աշխատասենյակների նորմալ ջերմաստիճանի ապահովումը կենսական անհետաձգելի անհրաժեշտություն է համայնքապետարանի համար:
2. Առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը կազմակերպել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 10-րդ բաժնի 74-րդ կետով սահմանված դրույթներով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ

2. ԱՇՈՒՂՅԱՆ ՏԻԳՐԱՆ

3. ԲԱԼԱՅԱՆ ԱՐՍԵՆ

4. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՌԱՖԱՅԵԼ

5. ԻՍՈՅԱՆ ՄԵԼԱՆՅԱ

6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍՄԲԱՏ

7. ՂԱԶԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

8. ՄԻԿԻՉՅԱՆ ՀԱՄԼԵՏ

9. ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՐԻԵՏԱ

10. ՍԱՔԱՆՅԱՆ ԳԵՒՈՐԳ

11. ՍԱՔԱՆՅԱՆ ԿԱՄՈ

**Համայնքի ղեկավար՝** ԱՇՈՏ ԱՇՈՒՂՅԱՆ